ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության փորձագետ Ռուստամ Մարգարյանի

Ես՝ Ռուստամ Մարգարյանս, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024 թվականի հունիսի 25-ին կնքված N 36 պայմանագրի համաձայն:

2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ ֆինանսների նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 36-Ա և նոյեմբերի 02-ի թիվ 40-Ա հանձնարարագրերով ընդգրկվել եմ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում իրականացվող ստուգման խմբի կազմում՝ որպես խմբի ղեկավար:
2. ՀՀ ֆինանսների նախարարի 2024 նոյեմբերի 02-ի թիվ 42-Ա և նոյեմբերի 28-ի թիվ 44-Ա հանձնարարագրերով ընդգրկվել եմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ում իրականացվող ստուգման խմբի կազմում՝ որպես խմբի ղեկավար:
3. Մասնակցել եմ ստուգումների արդյունքներով ստուգման ակտերի, զեկուցագրերի, գրությունների, տեղեկանքների կազմման աշխատանքներին և համապատասխանաբար առաջարկություններ ներկայացրել ստուգվող կազմակերպություններում արձանագրված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ:
4. Ապահովել եմ վարչության պետի կողմից տրված ընթացիկ հանձնարարականների կատարումը:

Ֆինանսաբյուջետային վերահսկողության
վարչության փորձագետ Ռուստամ Մարգարյան